



TOPICAL DIALOGUES

«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ծրագիրը

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին

N 5

2015

Սույն տեղեկագիրը պատրաստվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի կողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:



Մենք ինտերնետում՝

www.regioncenter.info

www.publicdialogues.info

<https://www.facebook.com/RegionCenter?fref=ts>

Արեւելյան գործընկերության երկրների ինտեգրացիոն իրողություններ եւ սեփական անվտանգության ընկալումներ - 2015

Մայիսի 25-27-ին «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ինտերնետ քննարկումների հարթակում տեղի ունեցավ «Արեւելյան գործընկերության երկրների ինտեգրացիոն իրողություններ եւ սեփական անվտանգության ընկալումներ - 2015» կոնֆերանս:

Այն կազմակերպվել էր «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում, որին աջակցում է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Հասարակայնության հետ կապերի վարչությունը:

Կոնֆերանսին մասնակցում էին՝

Ալեքսանդր Կոչիլովը (Ռուսաստան) - Կովկասագետների գիտական ընկերության նախագահ,

Արման Մելիքյանը (Հայաստան) - պաշտոնաթող արտակարգ եւ լիազոր դեսպան,

Ելենա Խոշտարիան (Վրաստան) - Վրաստանի բարեփոխումների ընկերակցության (GRASS) հիմնադիր,

Վալերի Օստալեպը (Մոլդովա) - Մոլդովայի նախկին փոխարտգործնախարար, Դիվանագիտական հետազոտությունների եւ անվտանգության հարցերով ինստիտուտի տնօրեն:

Կոնֆերանսը վարում էր «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն **Լաուրա Բադդասարյանը**:

- Ի՞նչ սպասելիքներ ունեին Արեւելյան գործընկերության երկրները Ռիգայի գագաթաժողովից, ինչպե՞ս են դրանք հարաբերակցվում կոնկրետ արդյունքների հետ:
- Որո՞նք են Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի՝ նոր մարտահրավերները ինտեգրացիոն գործընթացների համատեքստում:

- Ռուսաստանի եւ ԵՄ-ի ինտեգրացիոն ծրագրերի ի՞նչ ընկալումներ կան այսօր Արեւելյան գործընկերության երկրներում, փոփոխվե՞լ են այդ ընկալումները ծրագրերի մասին հրապարակային հայտարարություններից հետո:
- Ի՞նչ ազդեցություն է գործում ուկրաինական ճգնաժամն այլ երկրների ինտեգրացիոն օրակարգերի վրա:
- Ներկայումս ինչպիսի՞ն է անվտանգության ինքնազգացողությունը կոնֆերանսի մասնակիցների երկրներում, ինչի՞ հետ է դա կապված:
- Ինչպե՞ս կարող է անդրադառնալ ընդհանուր առմամբ Արեւելյան գործընկերության եւ անդամ երկրների սպասելիքների վրա նրանց հետ աշխատելու տարբերակված մոտեցումը:

Այս եւ մի շարք այլ հարցեր քննարկվեցին եռօրյա ինտերնետ քննակման ընթացքում: Տեղեկագրի այս համարում ներկայացնում ենք հատվածներ կոնֆերանսի նյութերից:

Կոնֆերանսի նյութերին ամբողջությամբ կարելի է ծանոթանալ այստեղ՝ <http://regioncenter.info/node/1104>

ՌԻԳԱՅԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՉՈՐ ՄՆԱՑՈՐԴ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Լաուրա Բադլասարյան (Հայաստան) – Եվրոպական (Արևելյան գործընկերությունը որպես Եվրոպական հարեանության քաղաքականության բաղկացուցիչ) եւ եվրասիական (ԵԱՏՄ) ինտեգրացիոն գործընթացների կոնտեքստները շարունակում են ջրի երեսին պահել անդամ երկրների անվտանգության ապահովման հետ կապված առավել սուր հարցերն ու մարտահրավերները:

Այս իրավիճակը մեծապես ձեւավորվել է անվտանգության բնագավառում եղած կոլեկտիվ գործիքների եւ այն աշխարհաքաղաքական իրողությունների միջեւ անհամապատասխանության պատճառով, որոնց հետ ստիպված են գործ ունենալ մեր երկրները: Եվ սա այն դեպքում, երբ Արևելյան գործընկերության 6 երկրներից 5-ը գործ ունեն չլուծված հակամարտությունների հետ:

Կոշտ ընտրության առաջին ալիքից հետո երկրները խմբավորվեցին իրենց հետաքրքրություններին համապատասխան: Հայաստանն ու Բելառուսը ԵԱՏՄ անդամներ են, բայց միեւնույն ժամանակ նաեւ՝ Արևելյան գործընկերության մասնակիցներ: Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը՝ երկրների խումբ է, որն ուղղվում է դեպի ԵՄ առանց հայացք զցելու ԵԱՏՄ-ի ուղղությամբ: Ադրբեջանը երկիր է, ինչպես ԵՄ-ի, այնպես էլ Ռուսաստանի հետ հատուկ հարաբերությունների հավակնություններով, որը համարում է, որ իր համար այսպես՝ առանց ինտեգրացիոն միությունների ու դաշինքների, էլ է լավ: Իմ կարծիքով՝ մինչ օրս բախվող եվրոպական եւ եվրասիական գործընթացների՝ միջեւ հարաբերությունների նոր փուլ է գալիս: Եվ այստեղ հնարավոր է հարաբերականորեն մեղմ գույների գերակայությունը, քան մենք տեսնում էինք վերջին մեկուկես տարվա ընթացքում:



Արման Մեղիքյան (Հայաստան) - ԵՄ պաշտոնյաները գրեթե քամահրանքով էին խոսում Հայաստանի մասին եւ գործականում հայտարարում էին, որ երկիրը կարող է մոռացության մատնել ԵՄ-ի հետ հատուկ հարաբերություններ կառուցելու հեռանկարի մասին: Նույնը կրկնում էին Արեւելյան գործընկերության այլ անդամ երկրների ներկայացուցիչները: Ուկրաինական ճգնաժամը, որը հասցրեց իշխանության փոփոխությանը, Ղրիմի փաստացի կորստին եւ երկրի հարավ-արեւելքում լայնածավալ ռազմական գործողությունների, ստիպեց բոլորին այլ կերպ նայել նաեւ Հայաստանում կայացված որոշմանը: Այդ պատճառով, եթե մեր եվրոպացի բարեկամները պնդում էին, որ Հայաստանը պետք է ընտրություն կատարի եվրոատցիացման եւ ԵԱՏՄ անդամագրման միջեւ, ապա, հավանաբար ուկրաինական դառը դասերի ազդեցության տակ տոնայնությունն սկսեց փոխվել, եւ Հայաստանի մինչ այդ հռչակած՝ երկու ուղղություններով հարաբերություններ զարգացնելու մասին դիրքորոշումն սկսեց ադեկվատ ընկալվել:



Ալեքսանդր Կոչիլով (Ռուսաստան) – Մոտ հեռանկարում մեղմ երանգների գերակայության մասին դրույթի հետ կարելի է համաձայնել այն առումով, որ «կամ, կամ» սկզբունքը, որը խստորեն պահանջում էր նախեւառաջ ԵՄ-ն, հիմա փոխարինվեց «եւ, եւ» - ով, եւ այստեղ կարելի է շնորհավորել հայկական դիվանագիտությանը, որը երկար տարիներ հանդես էր գալիս այս սկզբունքի օգտին: Հուսանք, որ իրավիճակը կզարգանա այս ուղղությամբ եւ Եվրոպական ու Եվրասիական ինտեգրացիոն ծրագրերը արդյունքում կլրացնեն իրար, այլ ոչ թե կլինեն առձակատման մեջ: Բայց բացառված չեն եւ ոչ լավատեսական առձակատման տարբերակները եւ վերադարձը «կամ, կամ»-ին:



Վալերի Օստալեպ (Մոլդովա) - Մոլդովայի ղեկավարությունն ու հասարակությունը պատրանքներ չունեին Ռեզայի գազաթաժողովի առումով: Մոլդովային ցնցում են կոռուպցիոն սկանդալները, որոնք խստորեն քննադատվել են ԵՄ-ի կողմից: Մոլդովան արդեն ստացել է ԵՄ-ի հետ ոչ այցազրային ռեժիմը եւ վավերացրել Ասոցիացման պայմանագիրը: Ուստի՝ տնտեսական դեգրադացիայի, կոռուպցիայի եւ երկրի ներսում կոնֆլիկտների ֆոնին, այս պահին ԵՄ-ից Մոլդովան

օբյեկտիվորեն ակնկալիքներ չունի: Սա է պատճառը, թե ինչու ոչ Մոլդովայի իշխանությունները, ոչ էլ հասարակությունը այս գազաթափոցի սպասելիքներ չունեն: Մոլդովայի դեպքում ԵՄ-ն ընկավ իր իսկ թակարդը: Հինգ տարի շարունակ նրանք այք էին փակում ցանկացած խախտման վրա, որպեսզի կարողանային հպարտանալ Արեւելյան գործընկերությունում ունեցած իրենց հաջողությամբ, իսկ հիմա չգիտեն ինչ անեն այս «հեքիաթի» հետ:



Ելենա Խոշտարիա (Վրաստան) – Վերջին տարիների ընթացքում մենք ձեռքբերեցինք Բրյուսելի հետ շփվելու հարուստ փորձ: Մենք հասկանում ենք բյուրոկրատիայի եւ քաղաքական որոշումների հասունացման տրամաբանությունը: Ռիզայի գազաթափոցի հետ կապված առանձնակի սպասելիքներ եւ պատրանքներ մենք չունենինք: Աշխատում էինք երկու հարցի շուրջ, եւ դրանք էին՝ ոչ այցագրային ռեժիմը ու անդամագրման հեռանկարի հարցում կոկրետ ձեւակերպումները: Դեռ նախքան գազաթափոցը կոնսուլտացիաների ընթացքում պարզ դարձավ, որ այս հարցերը այս միջոցառման ժամանակ չեն լուծվելու, թեեւ մինչեւ տարեվերջ հույս ունենք ստանալ ոչ այցագրային ռեժիմի որոշումը:

Մենք հասկանում ենք, որ տարածաշրջանում Ռուսաստանի ագրեսիան ԵՄ-ի գործողություններում որոշակի շտկումներ է պահանջում, եւ հիմա կտրուկ շարժումներ չեն լինի: Բայց նաեւ հասկանում ենք, որ Բրյուսելն էլ իր հերթին է հասկանում Ուկրաինայում իրադարձություններից հետո ամբողջ եվրոպական անվտանգության համար Ռուսաստանից բխող սպառնալիքը, եւ որ մեր ինտեգրումը լիովին անդադնալի գործընթաց է: Ռուսաստանի կողմից սպառնալիքներն ու շանտաժը ուժեղացնում են մեր դիրքերն ու փաստարկները:



Լաուրա Բադրասարյան (Հայաստան) - «Փորձագետները նույնիսկ համաձայնում են իմ տեսանկյունից մի փոքր ցինիկ այն կարծիքի հետ, որ միակ երկիրը, որի համար գազաթափոցը շոշափելի արդյունավետ էր, դա Հայաստանն էր»:

Սա գրելով՝ նկատի ունեի այն հանգամանքը, որ ի տարբերություն այլ երկրների, որոնք ավելին էին ակնկալում, բայց ստացան ավելի քիչը ստորագրված փաստաթղթերում, Հայաստանին, առանց իրականում

գոյություն ունեցող փաստաթղթի, այլ միայն «շարք վերադառնալու» ուղեգրով համարում են առավելագույնը ստացածը: Վրաստանը, որն ի տարբերություն նույն Մոլդովայի առաջ է գնացել բարեփոխումների եւ պահանջներին համապատասխանելու հարցում, ընդամենը ստացավ ոչ այցագրային ռեժիմի խոստում: Ի դեպ նախագահ Պորոշենկոյի հայտարարություններով՝ Ուկրաինան գազաթաժողովից ստացավ հնարավոր առավելագույնը՝ նույնպես ոչ այցագրային ռեժիմի խոստում եւ 1,8 մլրդ եվրոյի ներդրումներ: Նույնիսկ Ուկրաինայի դեպքում, երբ դեռ հասկանալի չէ, թե ինչ է լինելու նրա արեւելյան սահմանների հետ, նման խոստումներ ստանալը համարում եմ նույնպես արդյունք:



Վալերի Օստալեպ (Մոլդովա) - Որքան էլ պարադոքսալ է հնչում ԵՄ-ի հետ ոչ այցագրային ռեժիմի մյուս մասնակիցների համար, Մոլդովայի դեպքում այս ռեժիմն ավելի շատ խորհրդանշական բնույթ ունի: Մոլդովայի աշխարհագրական դիրքը, 3.5 մլն բնակչությունը, այցագրային պարզեցված ռեժիմը, որը մենք վաղուց ունենք, կրկնակի քաղաքացիությունը, քաղաքացիների՝ 2-3-ական եվրոպական անձնագրեր ունենալը (Ռումինիայի, Բուլղարիայի, Իտալիայի քաղաքացիություն). այս ամենի շնորհիվ ԵՄ-ի համար ոչ այցագրային ռեժիմը սիմվոլիկ խնդիր էր:

Այս քայլն անելիս ԵՄ-ն ըստ էության պարզապես լեգալացրեց գոյություն ունեցող իրողությունները: Մոլդովայի բնակիչների համար Եվրոպա ճամփորդությունները վաղուց խնդիր չեն եղել: ԵՄ-ն բացարձակ ոչ մի ռիսկի չէր գնում, եւ անցած տարին ապացուցում է սա: Դեպի ԵՄ ոչ մի հավելյալ միգրացիա տեղի չունեցավ: Միեւնույն ժամանակ դա հզորագույն աջակցության բռնուս էր Մոլդովայի եվրոպամետ քաղաքական գործիչների համար, որոնք շեշտակիորեն կորցնում էին իրենց հեղինակությունը եւ աշխատում են բացառապես եվրոպական քաղաքականության տիրություն, առանց ուշադրություն դարձնելու բնակչության կարիքների վրա, զբաղվելով եվրոպական «աչքփակոցիներով». վարչական շենքերի վրա ԵՄ դրոշներ, ԵՄ-ի օգտին հանրահավաքներ, անշրջադարձելի եվրոպական ուղղության մասին մշտական հռետորաբանություն:

Անհրաժեշտ է նշել, որ եվրոպամետ այս քաղաքականության

անքակտելի մասը հակառուսաստանյան հռետորաբանությունն էր: Որքան շատ ես քննադատում Ռուսաստանին, այնքան շատ ես «եվրոպացի»: Այս լիովին աբսուրդային վարքագիծը ավարտվեց նրանով, որ Մոլդովան կորցրեց ռուսաստանյան շուկան, չունի ոչ մի քաղաքական երկխոսություն Ռուսաստանի հետ, տնտեսությունը ետընթաց է ապրում, իսկ եվրոինտեգրման կողմնակիցների քանակը վերադարձավ պատմական մինիմումի մակարդակին: Դժվար թե ԵՄ-ն կարող է հպարտանալ նման արդյունքով:



Ելենա Խոշտարիա (Վրաստան) – Ուզում եմ անդրադառնալ եվրոպական գաղափարի շուրջ Վրաստանի բնակչության համախմբվածության հարցում հռետեսությանը: Ամեն ինչ շատ պարզ է, պետք չէ բյուրոկրատական բարդ հասկացություններ իմանալ Արեւմուտքի ու Ռուսաստանի առաջարկածի միջեւ ընտրություն կատարելու համար: Այն կենսակերպը, մտեցումը մարդուն եւ այն արժեքները, որոնց վրա հենվում է Արեւմուտքը, ուղղակի մոտ են ու գրավիչ: Արեւմուտքը կրթության մեթոդ է, ազատություն, զարգացում, իսկ Ռուսաստանը բռնություն է, ընդ որում՝ ոչ աբսուրդակտ, այլ՝ որն առնչվել է բոլոր սերունդներին:


Մեզ մոտ ձեւավորվել է շատ ուժեղ եվրոպամետ քաղաքական վերնախավ: Տաս տարիների ընթացքում ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի օգտին հանդես եկողների քանակը 65 %-ից չի ընկել: Ռուսամետ ուժերի մաքսիմումը 10% է: NDI-ի վերջին տվյալներում (Վրաստանում սոցիոլոգիական հարցումների տվյալներ, որոնց համաձայն Վրաստանի եվրասիական զարգացման կողմնակիցների թիվը աճել է – խմբ.) թույլ են տրվել մեթոդաբանական սխալներ: Շատերը պարզապես չգիտեին, թե ինչ է Եվրասիական միությունը:

...Շահեր, այդ թվում՝ աշխարհաքաղաքական, ունեն բոլորը, ԵՄ-ն ու ԱՄՆ-ն՝ նույնպես: Բայց Արեւմուտքի գլխավոր տարբերությունը Ռուսաստանից այն է, որ այդ շահերի իրականացման ժամանակ պահպանվում են խաղի որոշակի կանոններ: Լավ օրինակ է Վրաստանի ու Ռուսաստանի միջեւ բանակցությունները Համաշխարհային առևտրի կազմակերպություն մտնելու հարցում: Չնայած Ռուսաստանի այդ կազմակերպությանը շուտափույթ անդամագրվելու հարցում ԱՄՆ-ի

հետաքրքրվածությանը, Վրաստանի վրա ոչ ոք ճնշում չի գործադրել, եւ բանակցությունների ժամանակ ստիպված էին հաշվի առնել նաեւ մեր շահերը:



Արման Մելիքյան (Հայաստան) – Ես կիսում եմ այն կարծիքը, որ Հայաստանի միջանկյալ շահումը ոչ այնքան վիրտուոզ դիվանագիտության արդյունքն էր, որքան իր դեպքում անընդունելի ու անհաղթահարելի կոշտ պայմանների արդյունք, որոնք առաջադրվել էին ԵՄ-ի կողմից: Այսինքն՝ չկար ռեալ ողջամիտ այլընտրանք, իսկ ժամանակը ամեն ինչ իր տեղը դրեց: Սրա հետ կուզեի նշել հետեւյալը. Բելառուսը՝ լինելով Արեւելյան գործընկերության ծրագրի լիիրավ մասնակից, Ռուսաստանի ու Ղազախստանի հետ դարձավ Եվրասիական միության համահիմնադիրը, որին միանալու մասին Հայաստանը հայտարարեց նրա հիմնադրումից ամիսներ անց: Արդյունքում, փոխանակ Բելառուսին պահանջներ ներկայացնելու, ԵՄ-ն նախընտրեց ծաղրել Հայաստանին, ինչը հավանաբար նպատակահարմար էր Ուկրաինայում համապատասխան մթնոլորտ ստեղծելու համար եւ ուշադրությունը կարելուր մոտ հարեւանի վրա չկենտրոնացնելու համար: Ինչեւէ, Հայաստանի՝ ասոցիացման պայմանգիրը չստորագրելն արեւմտյան ավելի մեծ ուշադրության արժանացավ, քան պաշտոնական Մինսկի՝ ԵԱՏՍ ստեղծելու հետեւողական ընթացքը:



Ելենա Խոշտարիա (Վրաստան) – Առանձին ուզում եմ ընդգծել, որ Վրաստանի համար այցագրերի հարցը հատուկ կարեւոր է այն առումով, որ երկրում ուժեղանում է ռուսաստանյան քարոզչությունը հոռետեսական տրամադրություններ տարածելու նպատակով: Այս տեսանկյունից ոչ այցագրային ռեժիմը այն դրական գործոնն է, որը կօգնի զգալ ԵՄ-ի ներկայությունը եւ կտա շոշափելի արդյունք բնակչությանը:

Արեւելյան գործընկերության երկրների անվտանգության նոր մարտահրավերները նրանց եւ հարակից տարածաշրջաններում աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում



Լաուրա Բաղդասարյան (Հայաստան) – Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքը տարբերվում է Ղրիմի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքից: Անընդհատ ընդգծվում է, որ Ղարաբաղը բոլորովին այլ գործ է եւ տարբերվում է Ղրիմից: Այնպես որ այս դեպքում Հայաստանի ու Ռուսաստանի՝ Ղրիմի ուղղությամբ դիրքորոշումների համընկնումը (խոսքը Ռիգայի գազաթափողովի հռչակագրում Ղրիմի հարցով ձեւակերպման մասին է - խմբ.) պետք է համարենք զուտ տեխնիկական բնույթի:



Ալեքսանդր Կոչիով (Ռուսաստան) - Ղրիմի տարբերությունը Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաեւ ՌԴ-ի ու Հայաստանի՝ այդ խնդիրներում դիրքորոշումների տարբերությունն ակնհայտ է: Ես չեմ գրել «Հայաստանի ու Ռուսաստանի դիրքերի համընկնելու մասին Ղրիմի ուղղությունում», դա չէր համապատասխանի իրականությանը: Բայց հայտնի հանգամանքներին որոշակի ակնարկում Ս. Սարգսյանի ելույթում կարելի է տեսնել այն առումով, որ տարբեր պետություններ ունեն տարբեր դիրքորոշումներ նման խնդիրների հանդեպ: Օրինակները չեմ թվարկի, դրանք հանրահայտ են: Ամբողջովին դա վերաբերում է նաեւ Ղրիմին:



Լաուրա Բաղդասարյան (Հայաստան) – Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում սովորական մարդու մոտ, որը լսում է «Ղրիմի տարբերությունը Լեռնային Ղարաբաղից ակնհայտ է, ինչպես նաեւ՝ ՌԴ-ի ու Հայաստանի այն խնդիրներում դիրքորոշումների տարբերությունը», առաջանում են իմ կարծիքով տրամաբանական հարցեր, որոնք կուզեի, որ ավելի մանրամասն ներկայացվեին: Իսկ որն է Ղարաբաղյան հակամարտությունում՝ Հայաստանի եւ Ղրիմի հարցում՝ Ռուսաստանի դիրքորոշումների միջեւ եղած այդ ակնհայտ

տարբերությունը: Եթե երկուսն էլ ժամանակին խորհրդային իշխանությունների որոշմամբ փոխանցվել են այլ հանրապետությանը, եթե որոշակի հանգամանքների բերումով երկու տարածաշրջաններում անց են կացվել հանրաքվեներ, իրենց հայտնի արդյունքներով: Եթե Հայաստանի ու Ռուսաստանի պաշտոնական փաստարկները (համապատասխանաբար՝ Ղարաբաղյան եւ Ղրիմի հարցերում) հենվում են այն բանի վրա, որ Ադրբեջանից եւ Ուկրաինայից անջատումները բնակչության կամարտահայտման արդյունքն են: Եվ գլխավորը՝ ինչպես Ղարաբաղում ժամանակին, այնպես էլ Ղրիմում հայտնվել էր բնակչության (համապատասխանաբար՝ Ղարաբաղում հայերի, Ղրիմում՝ ռուսների) ֆիզիկական ոչնչացման հարցը: Եթե մի կողմ թողնենք քաղաքագիտական եւ այլ փաստարկները, որոնք այս էության հետ ոչ մի առնչություն չունեն եւ ավելի շատ վկայակոչվում են որոշակի կոնյունկտուրային դրդապատճառներով:



Ալեքսանդր Կոչիով (Ռուսաստան) - Դուք թվարկեցիք Ղրիմի եւ Ղարաբաղի միջեւ ընդհանուրը: Բայց տարբերությունն այն է, որ ՌԴ կառավարությունը գնաց այդպիսի քայլերի, իսկ Հայաստանի իշխանություններն այդպես էլ չարեցին դրանք: Չեմ կարող դատել որեւէ մեկի կոնյունկտուրային մտադրությունների մասին, ռուսաստանյան ղեկավարության համար նրա գործողությունները թելադրված էին սկզբունքային հարցերով, եւ այդ դիրքորոշումը ստացավ ռուսաստանյան քաղաքացիների մեծամասնության աջակցությունը: Երկրներից շատերը տեղի ունեցածը գնահատեցին որպես անեքսիա, սա նրանց իրավունքն է: Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը նման գնահատականի հետ համաձայն չէ: Լեռնային Ղարաբաղի մասին Ադրբեջանն ու նրա դաշնակիցներն օգտագործում են «Հայաստանի կողմից օկուպացված Ադրբեջանի տարածքներ» ձեւակերպումը: Եվ նրանք ունեն դրա իրավունքը, բայց ինձ թվում է, որ նման գնահատականը դժվար թե ընդունելի լինի Հայաստանի իշխանությունների, բնակչության, հայկական Միյուռքի համար:



Արման Մեղիքյան (Հայաստան) – ... Չնայած Ուկրաինայի հարավ-արևելքում ռազմաքաղաքական իրավիճակի հարաբերական կայունացմանը եւ Մինսկի համաձայնությունների ձեռքբերմանը, ուկրաինական ճգնաժամը հակամարտության խորացման եւ տարածական ընդլայնման դեռեւս վիթխարի ներուժ ունի: Այս իմաստով դետոնատորի դեր կարող է խաղալ Մերձդնեստրը, քանի որ Քիշնևի ու Տիրասպոլի միջեւ զինված հակամարտության վերսկսումը ներկա պայմաններում կարող է հանգեցնել ուկրաինական Օդեսսայի ու Նիկոլաեւսկայա շրջաններում կենտրոնախույս տրամադրությունների աճին, իսկ արդյունքում՝ նաեւ երկրի ողջ հարավի նկատմամբ Կիևի վերահսկողության կորստին: Հնարավոր է նման սցենարը բավական արմատական թվա, բայց ես այն կարծիքին եմ, որ Ուկրաինայի տարածքային ամբողջականության պահպանումն այսօր արտաքին ուժերին նույնիսկ ավելի քիչ է հետաքրքրում, քան նախագահ Յանուկովիչի իշխանազրկման պահին, երբ ակնհայտ էր, որ եթե նա լքի Կիևը, կսկսվի երկրի մասնատման անխուսափելի գործընթաց: Իշխանությունը վերցրած ուկրաինական վերնախավի մի մասն այն ժամանակ ի վիճակի չգտնվեց ինչ-որ բան հակադրելու բացասական միտումներին, իսկ այսօր այն զգալիորեն ավելի վատ վիճակում է, եւ դատելով ամեն ինչից, չունի իր քաղաքացիների վստահության բավարար քվեն:



Լաուրա Բադալյան (Հայաստան) - Իմ տեսանկյունից ուկրաինական ճգնաժամը զարգանում է արտաքին քաղաքական երկու չափումներում. հակամարտություն Ուկրաինայի ու Ռուսաստանի, եւ հակամարտություն Ռուսաստանի ու այսպես կոչված հավաքական Արեւմուտքի միջեւ: Երկու դեպքում էլ կան մարտահրավերներ, որոնք կարող են պայթեցնել այլ երկրների անվտանգության համակարգերը, նկատի ունեմ դրաց հիմնական բաղկացուցիչները:

Կա արմատավորված պնդում, որ եթե Ուկրաինան համաձայնեք ԵԱՏՄ անդամությանը, ապա Հայաստանը որպես երկիր Ռուսաստանի համար այդքան կարեւոր թեկնածու չէր համարվի ԵԱՏՄ-ի ձեւավորման այս

փուլում: Եթե դա այդպես չլիներ, ապա Հայաստանի հանդեպ դրսևորված հետևողականությունը կսկսվեր Մաքսային Միության ձեւավորման ու գործունեության ժամանակ: Հայաստանի՝ իր ընթացքը ԵՄ-ից դեպի ԵԱՏՄ շրջադարձելու որոշումը հայաստանյան ինտեգրացիոն օրակարգի վրա ուկրաինական ճգնաժամի թողած ազդեցության ակնհայտ դրսևորումներից մեկն է:

Նման շրջադարձի համար մյուս ուժեղ գրգռիչը Ղարաբաղյան հակամարտության թեժացման հնարավորությունն է: 2014 թվականի ընթացքում եւ միջեւ վերջերս շարունակված բախումներն ըստ քանակի, մասնակցող ռազմուժերի տեսակների, աշխարհագրության, աննախադեպ էին եւ առաջին հերթին ազդարարում էին հենց թեժացման հնարավորության մասին: Անհանգստացնում է նաեւ այն հանգամանքը, որ Ռուսաստանի ու արեւմտյան աշխարհի միջեւ հակասությունները կարող են դրսևորվել նաեւ Ղարաբաղյան ուղղությունում, որտեղ խաղաղարարների բացակայության պայմաններում հրադադարի պահպանումը հնարավոր էր այդուհանդերձ աշխարհաքաղաքական ուժերի, հակամարտության կողմերի միջեւ բազմաշերտ ու բարդ ուժերի հավասարակշռության շնորհիվ: Այդ հավասարակշռությունը կարող է խախտվել:

Ընդհանրապես հակամարտության թեժացման խնդիրը ամենահրատապն է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հիմա մեր տարածաշրջաններում գլոբալ դիմակայության կողմերից յուրաքանչյուրն իր արտաքին քաղաքական քայլերը ներկայացնում է որպես ռեակցիա, պատասխան, այլ ոչ թե գործողություններ, որոնք բխում են իրենց նախնական պլաններից ու իրական շահերից: Սա պատանդի վիճակում է պահում մյուս երկրներին, որոնք, ինչպես ինձ է թվում, հիմա ուրախ կլինեին պարզապես սպասել փոթորիկի հանդարտվելուն, քանի դեռ այն չի քշել տարել իրենց տանիքները: Բայց բոլորին չէ, որ դա հաջողվում է իրականացնել տարբեր պատճառներով:

Մյուս ինտրիգը Մերձդնեստրի հակամարտության թեժացման հնարավորությունն է: Ինչպես հայտնի է, Ռուսաստանն ու Ուկրաինան հանդես են գալիս որպես այստեղ ստատուս-քվոյի պահպանման

երաշխավորներ: Ավելին, մինչև վերջերս ռուսաստանյան զինվորականների փոխադրումը դեպի Մերձդնեստր (խաղաղարար ուժեր) իրականացվում էր Ուկրաինայի տարածքով: Եվ ահա, Ռիգայի գազաթափողովի բացման օրը (մայիսի 21) Ուկրաինայի խորհրդարանը հայտարարեց այս հարցում եղած բոլոր նախկին պայմանավորվածությունների ողջ փաթեթն անվավեր ճանաչելու մասին: Հետո հայտնի դարձավ Քիշնևի որոշման մասին, որը ռուս զինվորականների տարանցման համար թույլ է տալու օգտագործել իր օդանավակայանը միայն նախօրոք, մեկ ամիս առաջ համաձայնեցնելու դեպքում: Գազաուղիայում հանրաքվեն, Ռուսաստանի ու Հարավային Օսիայի, Ռուսաստանի ու Աբխազիայի միջև ինտեգրացիոն փաստաթղթերի ստորագործումը. այս ամենը շարունակում է օրինակների շարքը:



Ալեքսանդր Կոչիով (Ռուսաստան) - Անվտանգության խնդիրների շարքին կարելի է ավելացնել հարավից այն մարտահրավերներն ու պոտենցիալ սպառնալիքները, որոնք Հարավային Կովկասի համար ունեն առաջնահերթ նշանակություն, ավելի մեծ, քան Արևելյան գործընկերության մյուս անդամների համար: Բայց որոնց մասին հաճախ են մոռանում՝ չափից շատ տարվելով եվրոպական չափանիշներին համապատասխանելու ու այլ սյուժեներով: Այդ սյուժեներն էլ նշանակություն ունեն, բայց այն ամենը, ինչ տեղի է ունենում Հարավային Կովկասի սահմանների մոտ, պարզապես սարսափեցնում է, դրա վերջը չի երեւում: Արմատական իսլամի ու Համաշխարհային խալիֆաթի կառուցման կողմնակիցների գործողությունների գոտիները անկասելիորեն ընդլայնվում են: Կոլեկտիվ Արեւմուտքը ռազմական ճանապարհով կարողացավ քարուքանդ անել տարածաշրջանի մի շարք պետություններ, բայց հիմա ի վիճակի չէ արդյունավետ դիմակայելու իսլամական արմատականներին:

Պատրա՞ստ են, արդյոք, ՀԿ երկրները դիմակայելու այս սպառնալիքին, ի՞նչ չափով կարող են երաշխավորել արտաքին ուժերը (նախեւառաջ՝ ՆԱՏՕ-ն, ԱՄՆ-ն, ԵՄ-ն) նրանց անվտանգությունը:

Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր ու Միջին Արեւելքում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների, Ռուսաստանի ու ԱՄՆ-ի, ԵՄ-ի մրջեւ փոխադարձ անընկալունակության ֆոնին առիթներ չեմ տեսնում առանձնակի հույսերի ու լավատեսության համար: Պե՞տք է, արդյոք, այս խնդիրը նկատի ունենան ՀԿ երկրները ԵՄ-ի ու ԵԱՏՄ-ի նկատմամբ իրենց քաղաքականությունը մշակելիս:



Վալերի Օստալեպ (Մոլդովա) – Իմ կարծիքով միամտություն կլինի մտածելը, որ Ռուսաստանի ու Ուկրաինայի միջեւ կարող են լինել կոնֆլիկտներ, որոնք կարող են լուծվել ոչ թե խաղաղ երկխոսության, այլ ծանր հրետանու ու տանկերի, իրենց քաղաքաների ոչնչացման միջոցով: Ես արտահայտում եմ իմ անձնական կարծիքը, բայց անցյալ տարի Ուկրաինայում կատարվածը եւ այն, ինչ հիմա է տեղի ունենում դժվար թե համապատասխանում է եվրոպական կամ միջազգային որեւէ ստանդարտի, որը վերաբերում է իշխանության փոփոխությանը, հակամարտությունների լուծմանը, ինչխիսին էլ որ դրանք չլինեն... Սա եւ ընկալում եմ որպէս Ռուսաստանի ու ԱՄՆ-ի միջեւ կոնֆլիկտի մի ձեւ, որտեղ, ցավոք, Ուկրաինան խաղում է պասիվ կատարողի դեր:

... Ընդգծում եմ, որ Քիշնեւի ու Տիրասպոլի, մարդկանց միջեւ, երկրում չկան բացարձակապէս ոչ մի խնդիրներ: Անհանգստացնում է, որ հենց Արեւմուտքում են ավելի ու ավելի տեղի ունենում ինչ-որ իրադարձություններ, որոնք կարող են սադրել նման կոնֆլիկտ: Եվ չափից շատ է զարմացնում Ուկրաինայի դիրքորոշումն այս հարցում, քանի որ Մերձդնեստրին առնչվող նրա գործողությունների մեծ մասը ոչ միայն ոչ մի կերպ կորրոկինացված չէ ոչ Տիրասպոլի, ոչ էլ Քիշնեւի հետ, այլեւ դժվար թե կարող են օգտակար լինել խնդրի կարգավորման համար: Ինձ համար միանգամայն ակնհայտ է, որ կամ Կիւեւը, կամ այլ խաղացողներ ուղղակի փորձում են օգտագործել Մերձդնեստրը Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու համար, ինչն իհարկե չի բխում ոչ Քիշնեւի, ոչ էլ Մերձդնեստրի շահերից եւ ի վերջո չի նպաստում կայունությանն այս տարածաշրջանում:


Արեւելյան գործընկերության երկրների անվտանգության գլխավոր սպառնալիքները



Վալերի Օստալեպ (Մոլդովա) – Մոլդովայում էթնիկ ռումինացիների քանակը 5% է: Ռումինիայի հետ միավորվելու հարցով հանդես եկող, նոր տիպի կուսակցությունների օգտին քվեարկողների քանակը մոտավորապես 7% է: Այսինքն՝ այս մարդկանց ռեալ դերն էական չէ:

Բայց Ռումինիան ռազմատենչ հայտարարություններ է անում եւ մշտապես սադրում է Մոլդովային: Անկասկած, չնայած սա սադրանք է, բայց սպառնալիք է մեզ համար: Հատկապես եթե պատկերացնեք, թե ինչպե՞ս է արձագանքում Մերձդնեստրը Ռումինիայի կողմից արված նման հայտարարություններին: Իսկ եթե հաշվի առնենք, որ Ռումինիան ՆԱՏՕ-ի եւ ԵՄ անդամ է, ապա որքա՞ն քարեկամական են այս գործողությունները չեզոք Մոլդովայի նկատմամբ:

Բայց Մոլդովայի համար գլխավոր սպառնալիքներն այնուամենայնիվ ոչ թե արտաքին են, այլ ներքին. լիովին կոռումպացված քաղաքական խավու քանդված տնտեսություն: Այս երկու գործոնները թույլ չեն տալիս Մոլդովային զարգանալու եւ դառնում են միջոց քաղաքական խաղացողների ձեռքում իրենց շահերն առաջ մղելու համար:




Արման Մեյլիքյան (Հայաստան) – Չնայած խոստումներին ու դրանց հիման վրա ձեւավորված սպասելիքներին այս տարի Հայաստանի տնտեսական անկումն անկասկածաբար կհասնի: Եվ մարդկանց համար մեծ հաշվով կարելու չէ, թե ինչի՞ց է այդ անկումը տեղի ունենում, շատերի համար տնտեսության մեջ այս բացասական միտումները կապվում են ԵԱՏՄ-ին անդամագրվելու որոշման հետ: Փորձագետների մակարդակում հաճախ են հնչում կարծիքներ, որ այս միությանն ինտեգրումը հեռանկարային չէ, քանի որ մասնակից երկրների իշխող վերնախավերն

ունակ չեն ձեռավորելու բիզնես միջավայր, որը կարող է արտադրել բարձրակարգ ու համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքներ ու առաջարկել ծառայություններ: Այս կարծիքին պետք է ականջալուր լինել: Առանց հասկանալու, որ համապատասխան բիզնես միջավայրը կարող է գոյություն ունենալ միայն որակապես այլ պետական կառավարման պայմաններում, որը տարբերվում է բոլոր ետխորհրդային երկրների ժառանգությունից, ոչ մի ինտեգրացիոն ծրագիր չի տալու ցանկալի դրական արդյունքը: Ես այն տպավորությունն ունեմ, որ Հայաստանի գործող իշխանությունները ԵԱՏՄ մտնելու քացաքական որոշումից որոշակի տնտեսական օգուտներ էին սպասում առաջին հերթին Ռուսաստանից: Չեմ կարծում, թե այդ սպասելիքները իրական հիմք ունեն:



Ալեքսանդր Կոիլով (Ռուսաստան) - Եվրոպական ընտրությունը բոլորովին էլ գիտակցական ընտրություն, դեպի լուսավոր ապագա ինչ-որ մի անշեղելի ճանապարհ չէ, ողջ ընթացքի մանրամասն քարտեզագրմամբ: Մեծամասնության համար դա երջանիկ ապագայի երազանք է, մարդիկ ունեն երազանքի իրավունք, եւ այստեղ չարժեռացիոնալ բացատրություններ փնտրել: Բայց ուրիշների համար դա քաղաքական գոյության միջոց է, սեփական խնդիրների լուծման ձեռնարկ է, որ հնչեցվող գեղեցիկ նշանաբանները սկզբունքորեն անիրագործելի են: Բարոյական տեսանկյունից այս ամենն ամենեւին էլ գրավիչ չէ, բայց հասկանալի է պրակտիկ առումով: Եթե քաղաքական գործիչը երազանքի փոխարեն (Համաշխարհային կոմունա, Համաշխարհային խալիֆա, Եվրոպական ընտրություն եւ այլն) սկսի ասել, որ մարդիկ պետք է երջանիկ ապագային հասնեն ծանր ու հետեւողական աշխատանքի միջոցով, անցնեն ցավերի, զրկանքների ու ամեն տեսակի անհաջողությունների միջով, այսինքն՝ ասեն բացարձակ ճշմարտությունը, ապա նա, որպես քաղաքական գործիչ ոչ մի հեռանկար չի ունենալու: Մարդկանց երազանք է պետք, նրանք «ուրախ են խաբվելու», բայց տարիների ընթացքում շատերի մոտ դա անցնում է, եւ նրանք սկսում են նայել կյանքին առանց վարդագույն ակնոցի:



Ելենա Խոշտարիա (Վրաստան) – Վրաստանի անվտանգության հիմնական սպառնալիքները ձեռավորվեցին Խորհրդային միության փլուզումից հետո եւ որակապես չեն փոխվել:

Սպառնալիքների առաջին խումբը կապված է Վրաստանի ինքնիշխանության նկատմամբ Ռուսաստանի ոտնձգությունների հետ, որոնք տարբեր դրսեւորումներ ունեն. տարածքներ, անջատողականներին սատարում, ուղղակի միջամտություն, բռնազավթում եւ անեքսիայի փորձեր, ներքին քաղաքականությանը միջամտելու փորձեր, քաղաքական ուժերին ու առանձին գործիչներին սատարում, ՀԿ-ներ, քարոզչություն արտաքի քաղաքական ուղղության վրա ազդելու նպատակով:

Սպառնալիքների այս խմբում պատերազմն Ուկրաինայում նոր փուլ է.

1. պարզ դարձավ, որ տարածաշրջանում իր ազդեցությունը վերականգնելու համար Ռուսաստանը պատրաստ է բավական հեռուն գնալու, առաջ եկան գործողությունների նոր ձեւեր՝ հիբրիդային պատերազմ, «կանաչ մարդուկներ», փափուկ ուժ եւ այլն,
2. Եվրոպան ու ԱՄՆ-ն առաջին անգամ գիտակցեցին, որ Ռուսաստանը դեռեւս սպառնալիք է եվրոպական անվտանգության համար եւ լրջորեն սկսեցին մտածել հարաբերությունների նոր ռազմավարության մասին: Այս իրավիճակը կարճ հեռանկարում կտրուկ սրում է Ռուսաստանից բխող սպառնալիքները, թեեւ՝ ստեղծում է հնարավորություն Արեւմուտքի ավելի մեծ համախմբման ու տարածաշրջանում ավելի մեծ ներգրավվածության համար:

Սպառնալիքների երկրորդ խումբը կապված է պետականաշինության եւ ժողովրդական ինստիտուտների կայացման հետ: Չնայած որ վերջին տարիները ինտենսիվ էին բարեփոխումների տեսանկյունից, եւ Վրաստանը ետխորհրդային տարածքներում տրանսֆորմացման դրական օրինակի վերածվեց, բայց գործընթացների անդառնալիության երաշխիքներ չկան:

«Անվտանգության ինքնազգացողության» աստիճանը 5 բալանոց սանդղակով



Ալեքսանդր Կոչիլով (Ռուսաստան) - Այստեղ որոշիչը ոչ թե պետությանը սպառնացող վտանգների բնույթն է, վտանգներ, որոնք միշտ եղել են բազմաթիվ եւ կլինեն այդքան էլ, այլ դրանց դիմակայելու պետության ունակությունն է եւ բնակչության կողմից իշխանությունների վարած քաղաքականությանը սատարման աստիճանն է, բնակչության պատրաստակամությունն է վատագույն սցենարների դեպքում գնալու զոհողությունների ու զրկանքների:

Ժամանակակից Ռուսաստանն արմատապես տարբեր է 1940 թվականի Ֆրանսիայից կամ 1917-ի Ռուսաստանից՝ իր «պարտվողականների» զանգվածային կուսակցությամբ: Արդեն իսկ այս պատճառով ներկայիս Ռուսաստանն ունի «անվտանգության ինքնազգացողության» բարձր աստիճան:

Հիմա, չնայած ռուսաստանյան մեր բոլոր ներքին ու արտաքին խնդիրներին, ես կարողմ եմ այդ ինքնազգացողությանը տալ 5 միավոր: Ակնհայտ է, որ այս գնահատականը գործընկերներից շատերին չափից ավելի լավատեսական կթվա: Բայց պետք է ընդգծել, որ Ռուսաստանի իշխանությունների համար ծայրահեղ կարելուր է բնակչության կողմից աջակցության բարձր մակարդակը, ինչը ներկա պայմաններում բավական բարդ խնդիր է:




Վալերի Օստալեպ (Մոլդովա) – Մոլդովան աշխարհաքաղաքական գործընթացների խաչմերուկում է, եւ հաջորդ տարիների ընթացքում մեր հիմնական սպառնալիքը լինելու են Ուկրաինայի հնարավոր փլուզումը, Ռումինիայի կողմից մշտական սպառնալիքները, Ռուսաստանի ու ԱՄՆ-ի միջեւ կոնֆլիկտը, որի ընթացքում Մոլդովային անընդհատ փորձելու են քաշել մեկ՝ դեպի այս, մեկ՝ դեպի մյուս կողմը:

«Անվտանգության ինքնազգացողության» աստիճանը՝ 2, ելնելով այն սպառնալիքներից, ինչի մասին ասացի, գումարած՝ տնտեսական ծանր վիճակն ու երկրում կոռուպցիայի բարձր մակարդակը:



Արման Մելիքյան (Հայաստան) – Առայժմ Հայաստանի անվտանգության գլխավոր ու անմիջական սպառնալիքը Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունն է, որը մշտապես սպառնում է լուծել Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ուժի գործադրմամբ, ինչպես նաեւ՝ որպես այս սպառնալիքների քաղաքականության օրգանական մաս՝ սպառազինությունների մրցավազքն է, որ նախաձեռնում է պաշտոնական Բաքուն: Ցավով պետք է արձանագրեմ, որ ՄԽ համանախագահ երկրներից երեքը (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա), որոնք ստանձնել են էթնոկոնֆլիկտի կարգավորման միջնորդական առաքելությունը, միայն Ռուսաստանն է իրականացնում զենքի խոշոր խմբաքանակների հատկացում Ադրբեջանին: Այս համատեքստում որոշակի սպառնալիք է կրում իր մեջ նաեւ Հայաստանի դեմ Թուրքիայի կողմից իրականացվող տրանսպորտային շրջափակումը: Պոտենցիալ սպառնալիքների շարքին պետք է դասենք Իսլամական պետության գործողությունները, ինչպես նաեւ Քրդստանի անկախության ծրագրի հնարավոր իրականացման հետ կապված դրսեւորումները, այդ թվում՝ ի հաշիվ ժամանակակից Թուրքիայի այն տարածաշրջանների, որոնք բնակեցված են քրդերով եւ սահմանակից են Հայաստանին:

Այս պահին Հայաստանի «անվտանգության ինքնազգացողության» աստիճանը եւ կգնահատեի 3 միավորով:



Ելենա Խոշտարիա (Վրաստան) – Մինչև ԱՄՆ-ում 2016

ընտրությունները Ռուսաստանի ու ԱՄՆ-ի միջև հարաբերությունների ոչ մի էական փոփոխություն չի լինի: Արդեն պարզ է, որ արտաքին քաղաքականությունը կունենա կարելու դերակատարություն, այդ թվում՝ տապալված վերաբեռնավորումն ու տարածաշրջանում Ռուսաստանի ագրեսիան: Հարաբերությունների դինամիկան կախված կլինի Ուկրաինայում իրադարձությունների զարգացումից, մասկանիորեն նաեւ՝ Մերձավոր Արեւելքում իրավիճակից:

ԵՄ-ի հետ մեր երկրների հարաբերություններում կարճաժամկետ ապագայում կտրուկ փոփոխությունների սպասել չարժե: Եվ ներքին գործընթացների, եւ Ռուսաստանի հետ հարաբերությունների վերազնահատման պատճառով: Մոտ ժամանակներս մենք կենտրոնանալու ենք արդեն գոյություն ունեցող ձեւաչափերի զարգացման վրա: Նպատակահարմար է ունենալ ավելի սերտ կոորդինացում Վրաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի, որպէս Ասոցիացման պայմանագրի երկրների, միջև: Մյուս տարեսկզբին Վրաստանն ու Ուկրաինան կստանան ոչ այցազրային ռեժիմը: Իհարկէ սա էլ է կախված Ուկրաինայում Ռուսաստանի գործողություններից: Զինված բախումների նոր փուլը կարող է արագացնել որոշումների կայացումը: Գործընթացի վրա ազդեցություն կունենան նաեւ մեր երկրների ներքին իրավիճակները:

Վրաստանի անվտանգության վրա ամենամեծ ազդեցությունը կունենա Ռուսաստանում ներքաղաքական իրավիճակը եւ Ուկրաինայում իրադարձությունների զարգացումը: Նաեւ կարելու է Թուրքիայի դերը: «Անվտանգության ինքնազգացողության» աստիճանը՝ 4: